

«ըզսա աւուրն աներեկի լուսաւորեա լուսով քոյին»:

Անհնար է մէկ յօդուածի սահմաններում ներկայացնել «Անձինք» ներքին բերած բոլոր լեզուական նորութիւնները, սակայն ցանկանում եմ նշել, որ կազմուած է նաեւ վերոյիշեալ «Անձինք» ներքին համարարաւր:

Այսպիսով «Անձինք» ներքին ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հինգերորդ դարի հայ հոգեւոր ֆնարբերութեան համեմատութեամբ եօթներորդ դարում սկզբնաւորուած մեր բանաստեղծութեան այս նոր տեսակն իր բառապաշարով ու նորակազմութիւններով, լեզուաճանաչական առանձնաշարակութիւններով ու տաղաչափութեամբ նշանաւորում է մի նոր դարաշրջան՝ հարստացնելով մեր հոգեւոր քաղաքացիութիւնը:

«Անձինք» ընտել մի սփանջելի ներքող է մասնաւորապէս Ս. Մեսրոպի հաննարով ստեղծուած մեր անձնական այբուբենին:

Օգտագործուած գրականութեան ցանկ

Ղ. Փարպեցի - «Հայոց պատմութիւն», Երեւան, 1982թ.:

Պատմութիւն Սերէոսի, Երեւան, 1979թ.:

Գ. Տարեւացի - «Գիրք Հարցմանց», Կ. Պոլիս, 1729թ.:

Գ. Աւետիսեան - Բացատրութիւն շարականաց, էջ ԺԳ.:

Մ. Արեղեան, - «Հայ հին գրականութեան պատմութիւն», 1970, հատ. Գ.:

Գ. Յակոբեան - Շարականների ժանրը հայ միջնադարեան գրականութեան մէջ:

Խ. Պալեան - «Շարականագիտութիւն», (Գրակ. մէջ) Երեւան, 1980թ., «Կոմիտաս Աղցեցի» (ձեռագիր):

Չայնֆաղ շարական, Վաղարշապատ, 1888թ.:

ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐՋԵԱՆ

## ԸՄԲԵՐԱՆԻՉ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Արաբ նշանաւոր բժիշկ Ապու՝ կը նկատուէր իր ժամանակի լաւագոյն գիտուններէն եւ իմաստուններէն մէկը:

Օր մը, երեկոյթի միջոցին՝ գինք նեղ դրութեան մէջ թողելու դիտումով տարականոն հարցումներ ուղղուեցան իրեն, բայց ասիկա նախընտրեց լռել քան թէ պատասխանել:

- Ուրեմն, ձեր լռութեամբ կը հաստատէք, որ չէք գիտեր:

- Շիտակ է, չեմ գիտեր, շեշտեց իմաստունը:

- Ի՞նչպէս կ'ըլլայ սակայն, որ խալիֆան այսքան սուղ կը վճարէ ձեր գիտութեան համար, նկատել տուաւ ուրիշ մը:

- Ատոր պատճառը շատ պարզ է: Խալիֆան կը վարձատրէ գիւ համաձայն իմ գիտցածներուս, եթէ պատահէր, որ ինծի վճարէր այն բոլոր բաներուն մասին, որոնց անգէտ եմ, այն ժամանակ՝ ամբողջ աշխարհին հարստութիւնը ինծի տալէն ետք, դեռ պարտական կը մնար:

«Մանրավէպեր»

Վարդան Ա. Թինյ. Տիպէրեան